ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 318 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 21-Ի N 219-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝

1. Սահմանել, որ Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02565835) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2023 թվականի մարտի 21-ի «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից իրականացվող «Կենսաբազմազանության պահպանության և բնապահպանական կրթության ազգային կենտրոն» ծրագրի մասին» N 219-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Վետֆարմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 04427162) 2025 թվականի մարտի 28-ին կնքված՝ N 25/06-Վ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մեղվաբուծական ապրանքների և պարագաների մատակարարում՝ 3,273,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Գամմա Էլեկտրիկս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 00098479) 2025 թվականի ապրիլի 21-ին կնքված՝ N 25/11-Վ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական ապրանքների մատակարարում՝ 1,200,731 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Սուֆետո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 07404587) 2025 թվականի ապրիլի 21-ին կնքված՝ N ՆԱՀՀ-01 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական նախագծային աշխատանքների կատարման և հեղինակային հսկողության ծառայության մատուցում՝ 199,992 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

19.05.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ